ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 2678-Ա «16» հուլիսի 2024 թ.

ԱՐՄԻՆԵ ՄԵԼՍԻԿԻ ՆԵՐՍԻՍՅԱՆԻՆ
«ԵՐԵՎԱՆԻ ՆՎԵՐ ՍԱՖԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ. 164 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 3-րդ մասի 1-ին կետով, 111-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 130-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի N 181-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 4-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ հաստատված N 3 հավելվածի 61-րդ կետը, Երևանի քաղաքապետի 2024 թվականի հունիսի 27-ի հ. Ն/36236-24 ծանուցումը, ինչպես նաև Արմինե Ներսիսյանի հետ 2019 թվականի հուլիսի 15-ին կնքված աշխատանքային պայմանագրի 4-րդ գլխի 4.1-րդ կետի «ա» ենթակետը և 5-րդ գլխի 5.1-րդ կետը՝

1. Արմինե Մելսիկի Ներսիսյանին՝ 2024 թվականի հուլիսի 16-ից ազատել «Երևանի Նվեր Սաֆարյանի անվան հ. 164 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնից՝ լուծելով նրա հետ 2019 թվականի հուլիսի 15-ին կնքված աշխատանքային պայմանագիրը:

2. «Երևանի Նվեր Սաֆարյանի անվան հ. 164 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը ժամանակավորապես վերապահել նույն կազմակերպության ուսումնադաստիարակչական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ Արմինե Ասլանյանին:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ